19555

ՇԱՀԱՆ ՆԱՔԱԼԻ

ԱՄԱՆ ԲԵԿ

Ռոմիրգուբիսն երեք արարված

1918
ԲՕՍՏՔՆ
«Հայրենիք»ի Տպարան

891.99
Ն-16

Ն-16

Ա

443

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

ԱՍԼԱՆ ԲԵԿ

Ողբերգութիւն 3 արարած

1918

ԲՕՍՏԸՆ

«Հայրենիք» Տպարան

10.07.2013

19599

Aslan Beg

Tragedy in 3 Acts

by

Shahan Natalie

1918

Boston, Mass.

Hairenik Press

19555

6737-87

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՕՍՄԱՆ ԲԵԿ — 50 տարեկան
ԱՍԼԱՆ ԲԵԿ — 25 տարեկան
ԱՑԻՇԷ ՀԱՆԸՄ — Օսման բեկի առաջին կինը, 40 տարեկան
ՃԷՄԻԼԷ ՀԱՆԸՄ — Օսման բեկի վերջին կինը, 21 տարեկան
ԱԼԻ ԷՖԷՆՏԻ — 50 տարեկան, Օսման բեկի հին բարեկամը, բանգէտ ու փորձառու մարդ
ՀԻԻՍԷՑՆ — Ասլան բեկի հաւատարիմ խօլամը
ՀԱՍԱՆ — Օսման բեկի խօլամներէն
ԳՆԶՈՒՀԻ ՄԸ
ՄԱՑՐ ՄԸ
ԱՂՋԻԿ ՄԸ
ԱՂԱԽԻՆՆԵՐ, ՏՂԱՄԱՐԴԵՐ, ԿԻՆԵՐ, ՄԱՆՈՒԿՆԵՐ, ԺԱՆԴԱՐՄՆԵՐ։

Անցքը տեղի կ'ունենայ Թուրքիայի հայաբնակ մէկ գիւղին մէջ, 1915-ի հայկական տեղահանութիւններու ատեն։

Բոլոր իրաւունքները
վերապահուած են հեղինակին

ԱՐԱՐԻԱԾ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Տեսարանն է Օսման բեկին տունը. արեւելեան ոճով ընդարձակ սենեակ մը: Խորը, բեմին մէջտեղը բալկօն մը, որի վանդակապատ փեղկերը բաց են. բալկօնը կը նայի բակին վրայ. հեռուն կ'երեւին գիւղին տունները մուխ ու ծուխի մէջ: Բալկօնին երկու կողմերը թրքական ոճով վանդակապատ երկու պատուհաններ: Աջ և ձախ կողմի պատերուն վրայ ռաֆներ և պատերուն մէջ թաղուած դէմ դէմի հայելիներ: Աջ ու ձախ պատերուն վրայ, խորը, կը բացուին երկու դուռեր: Եւ ռաֆներուն վրայ նարկիլէ և սուրճի ու թէյի ամաններ և գաւաթներ: Պատերէն վար կախուած են զէնքեր, կեռ թուրեր, հրացաններ եւ ատրճանակներ: Աջ կողմի պատին վրայ դիւան մը, ծածկուած թրքական գորգով և բարձերով: Գետինը ծածկուած է գորգերով: Ասդին անդին աթոռակներ:

Վարագոյրը բացուելուն պէս ճէմիլէ անհոգ երկնցած է դիւանին վրայ, մէկ ձեռքը սիկրէթը կը մխայ, միւս ձեռքը գնչուհիին ափին

մէջ։ Երկու աղախիններ դիւանին ոտքը նըստած՝ ուշադիր կը հետեւին գնչուհիին։

ԳՆՉՈՒՀԻ

Մուխ . . . կրակ . . . նախանձ . . . դա՛ւ . . . արիւն . . .

ՃԷՄԻԼԷ (անտարբեր)

Է՛, ուրի՞շ . . . ալ դէշ բան մնա՞ց . . . կարդա՛, կարդա՛, մի՛ վախնար, ըսէ, ինչ որ գիտես, բաղդս իմս է . . . ըսէ՛, ո՞ւրկէ եկած եմ, ո՞ւր կ'երթամ . . .

ԳՆՉՈՒՀԻ

Եկած ճամբադ արիւն է, հանըմ, դիակ կայ այդ ճամբային վրայ։

ՃԷՄԻԼԷ

Ապա գացած ճամբաս . . .

ԳՆՉՈՒՀԻ

Գացած ճամբադ դաւով լեցուն է. գացած ճամբայիդ վրայ ալ դիակ կայ . . .

(Սպասուհիները իրարու երես կը նային)

ՃԷՄԻԼԷ

Լաւ բան չկա՞յ բնաւ . . .

ԳՆՉՈՒՀԻ

Ի՞նչ լաւ բան ըսեմ, հանըմ . . . կարօտ մը ունիս, փափաք մը ունիս, կը վազես, կը վազես բայց չես հասնիր . . . սիրադ կը մխայ բայց բոց չկայ . . . ամուսնացած ես, ամուսինդ տա-

ըիքոտ է, քեզ չատ կը սիրէ . . . դուն ալ կը սիրես, բայց մուրազ չկայ . . . սիրածիդ ու քու մէջտեղ ճերմակ դլուխ մը կայ . . . (ՃԷՄԻԼԷ կը ցնցի. աղախիններկը իրարու կը նային) *Զորս բոլորտիքդ դաւ կայ, նախանձ կայ . . . սեւ օձ մը ետեւդ բոլորուեր քեզ խայթելու կըսպասէ . . . երկու ձեռքեր մէյմէկ դանակ ունին, մէկը կընիկի ձեռք է . . . մարդ պիտի սպանուի . . . եթէ չսպանես, պիտի սպանուիս . . .*

ՃԷՄԻԼԷ (ինքզինքը գտնել աշխատելով)

Ուրեմն ճակատիս գիրը բոլորովին սև է . . .

ԳՆՉՈՒՀԻ (թողելով ՃԷՄԻԼԷԻ ձեռքը)

Ինչ որ գրուած է չաւրուիր հանըմ . . .

ՍՊԱՍՈՒՀԻ (ձեռքը երկարելով)

Իմ բաղդս ալ կարդա։

ՃԷՄԻԼԷ

Աւելի լաւ է որ չկարդայ. քեզի ալ դէշ բաներ պիտի ըսէ . . .

ԳՆՉՈՒՀԻ (ցաւած բայց հաստատ շեշտով)

Ես ըսի այն որ քեզի պիտի պատահի . . .

(ՕՍՄԱՆ ԲԵԿ ԴՈՒՌԻՆ ՎՐԱՑ Կ'ԵՐԵՒԻ)

ՕՍՄԱՆ (առաջանալով)

Ի՞նչ է նորէն, ՃԷՄԻԼԷ, բռներ ես այս բոչային փէչը։ (աղախինները կը ցատկեն ոտքի, ՃԷՄԻԼԷ կը կանգնի)

ԳՆԶՈՒՀԻ

(կանգնելով և վիրաւորուած շեշտով)

Բոշաները, բե՛կ, փէրիներու ընկերներ են. մի՛ վիրաւորեր անոնք, դուն չես ճանչնար անոնք։

ՕՍՄԱՆ (գալով և ՃԷՄԻԼԷԻՆ հետ դիւանին վրայ նստելով)

Ես բոշաներ շատ եմ տեսեր.. գիւղին ծառերուն տակ մաղ չինողներ լեցուն են։

ԳՆԶՈՒՀԻ (աւելի վիրաւորուած և շեշտակի նայելով Օսմանին)

Բե՛կ, վախցիր փէրիներէն...

ՕՍՄԱՆ (խնդալով)

Եթէ այդպէս է իմ բաղդս ալ կարդա։

(ձեռքը կ'երկարէ գնչուհիին)

ՃԷՄԻԼԷ

Քեզի ալ ինծի ըսածները պիտի ըսէ... դաւ... արիւն...

ՕՍՄԱՆ

Դէ՛հ, կարդա նայիմ բաղդս։

ԳՆԶՈՒՀԻ (Օսմանի ձեռքը բռնելով և նըստելով)

Ո՛ւհ,... (գլուխը կը դարձնէ) *սարսափելի է, բե՛կ...*

(ՃԷՄԻԼԷ ոտքի կ'ելնէ)

ՕՍՄԱՆ (ընդհատելով)

ՃԷՄԻԼԷ՛, լաւ նարկիլէ մը պատրաստէ.

խահուէ մը ալ առանց շաքարի... (ՃԷՄԻԼԷ և աղախինները ձախ կողմի դուռէն դուրս կ'ելնեն) *է՛է՛...*

ԳՆԶՈՒՀԻ (Օսմանի ձեռքը կը բռնու)

Բե՛կ, չեմ կրնար, չեմ ուզեր կարդալ...

ՕՍՄԱՆ (բարկացած շեշտով ձեռքը երկարելով)

Ի՞նչ... կարդա՛ կ'ըսեմ քեզի... ըսէ՛ տեսնեմ, քանի տարեկան եմ. քանի կին ունիմ. երջանի՞կ եմ...

ԳՆԶՈՒՀԻ

Սոսկալի է, բե՛կ... արի՛ւն... արի՛ւն...

ՕՍՄԱՆ (ծաղրական)

Գիտեմ, գիտեմ, այս օրերը շատ արիւն կայ, չե՞ս տեսներ գիւղերը կը մխան, մարդերը կը սպանեն... բաւական վարպետ ես... դուն իմ հարցումներուս պատասխանէ.... չե՞ս գիտեր, փէրիներուդ հարցուր։

ԳՆԶՈՒՀԻ (վիրաւորուած)

Ցիսուն տարեկան ես դուն, բե՛կ... երկու կին ունիս... կը կարծես թէ երջանիկ ես, բայց ամենէն դժբաղդ մարդն ես... կիներէդ մէկը կը սիրէ քեզ ու կը նախանձի որ դուն զինքը երեսէ ձգեր ես. կնիկներէդ միւսը կը սիրես դուն, բայց ան քեզ կը խաբէ...

ՕՍՄԱՆ (գնչուհիին խօսքերը իրականութեան հետ բաղդատելու յայտնի նիգով և շեշտակի)

Ի՞նչ...

ԳՆԶՈՒՀԻ

Ես կ'ըսեմ այն ինչ որ կը տեսնեմ... Մի՛ զարմանար... ես չուզեցի քու բաղդդ կարդալ, դո՛ւն հրամայեցիր և փէրիները ծաղրեցիր... ու անոնք բարկացած՝ քու բաղդիդ կոթոսան կը խառնեն։

ՕՍՄԱՆ (կասկածոտ և զայրացած)

Կարդա՛, կարդա՛... ըսէ՛, սիրած կինս մէ՞կը կը սիրէ... ո՞վ...

ԳՆԶՈՒՀԻ

Սէր կը կեղծէ, բայց քեզ չի սիրեր... Եբիտասարդի մը գլուխը կայ քու և անոր մէջ...

ՕՍՄԱՆ

Ցեռո՞յ... բայց ո՛չ, լռէ՛... չեմ ուզեր այլեւս քեզ լսել...

ԳՆԶՈՒՀԻ

Փէրիները կը հրամայեն ինձ, չեմ կրնար լռել... արիւն կայ ձեռքերուդ վրայ... կնիկի ձեռք մը կայ դանակը ձեռքը՝ կուրծքիդ վրայ... Օրերդ համրուած են...

ՕՍՄԱՆ

(զսպուած զայրոյթով եւ ինքզինքը գտնել ճգնելով)

Հա՜, հա՜, հա՜...

ԳՆԶՈՒՀԻ

(կանգնելով եւ շեշտակի նայելով՝ Օսմանին)

Մի՛ ծաղրեր փէրիները, բե՛կ... վա՜յ անոնց, որոնց վրայ կը թափի մենէ-աղէկնեբու բարկութիւնը... (փայտին վրայ հակած՝ գնչուհին դէպի աջ դուռը կ'երթայ։ Ճէմիլէ կ'երեւի ձախ դուռին վրայ. Օսման կը շարունակէ խնդալ։ Գնչուհին այս խնդուքին վրայ ակնարկ մը կը ձգէ Օսմանի վրայ և կը մեկնի։ Ճէմիլէ կ'առաջանայ եւ Օսմանի առջեւ կը դնէ նարկիլէն։)

ՕՍՄԱՆ

Օղիս ալ բեր, Ճէմիլէ... Այսօր Եբիտասարդի արիւնս է բորբոքեր. կ'ուզեմ որ խըմենք միասին...

(Ճէմիլէ կ'երթայ. քիչ յետոյ կը վերադառնայ ափսէով մը, վրան շիշ մը օղի, երկու գաւաթներ և ամանով աղանդեր։ Այս միջոցին Օսման նարկիլէն կը ծխէ։)

ՕՍՄԱՆ

(Ճէմիլէն նստեցնելով քովը
եւ ձեռքը վիզին նետելով)

Հա, հա, հա՜,... դիտե՞ս ինչ կ'ըսէր այդ բոշան, Ճէմիլէ... կնիկներէս մէկը ղիս կը խաբէ եղեր... հա՜, հա՜, հա՜... թէ օրերս համ-

ըլլած են... դուն որ իմ քովս ես, հարիւր տարի կ'ապրիմ...

ՃԷՄԻԼԷ

Բոլոր մարդերուն օրերը համրուած են, բե՛կ... ամէն մարդ օր մը պիտի մեռնի.... բայց ի՞նչ է թիւը այդ օրերուն. ...բոչանները բաներ կ'ըսեն որ թէ իրաւին յարմարի թէ սուտին... ինծի ալ սոսկալի բաներ ըսաւ...

ՕՍՄԱՆ

Մտիկ մի՛ ըներ, աղւորիկս... լեցո՛ւր հատ մը ձեռքովդ ու խմցուր ինծի... (ՃԷՄԻԼԷՆ կը լեցնէ գաւաթը եւ կուտայ Օսմանին) դուն իմ միակ մխիթարիչս ես, ՃԷՄԻԼԷ... ե՞րբ ինծի տղայ մը պիտի տաս... (կը համբուրէ) որ իմ բեկութիւնս չարունակէ... Ասլանը կ'երթայ ու եթէ ալ չդառնայ... ո՞վ գիտէ աշխարհը մեռնիլ կայ... ես կ'ուզեմ որ դուն իմ հարստութեանս տէրն ըլլաս և քու տղադ իմ յաջորդս...

ՃԷՄԻԼԷ

Ո՞ւր կ'երթայ Ասլան բեկը. ինչո՞ւ համար...

ՕՍՄԱՆ

«Կ'երթամ» կ'ըսէ, չեմ գիտեր... «ես գիւղովը բեկ էի, հիմա որի՞ բեկ պիտի ըլլամ» կ'ըսէ... Կ'երթայ գիւղացիներուն հետ կարծելով որ անոնց կրնայ օգնել։ Երիտասարդ է

չի գիտեր թէ այս օրերը ուրիշ օրերու չեն նըմանիր... է՛, արիւն է՝ կը քաշէ... Քսան տարի դուրգուրացի իր վրայ, սիրեցի զինքը, զինքը մեծցնելով գործած մեղքս քաւել ուզեցի... Գրածը չաւրիր ՃԷՄԻԼԷ...

ՃԷՄԻԼԷ (տխուր)

Բայց դուն կրնաս արգիլել զինքը, բե՛կ, (վիզը գրկելով) մի՛ թողուր որ երթայ, կ'ըսպանեն զինքը, թշնամիները շատ են. մեղք է ջահիլ կեանքին...

ՕՍՄԱՆ (համբուրելով)

Դուն չես ճանչնար Ասլանը, աղւորս։ Երբէկ այնքան աշխատեցայ որ արգիլեմ զինքը. բայց Ասլանը որ որոշեց անկարելի է ետ կեցընել... Քսան տարի է որ զինքը կը ճանչնամ... Քաջ տղայ է, բայց... դուն չես ճանչնար զինքը։

ՃԷՄԻԼԷ

Ես անոր քաջագործութիւններու պատմութիւնը աղջիկ ատենս եմ լսեր, մեր լեռներուն մէջ Ասլան բեկին քաջագործութիւնները լո՜լո՜ներով կ'երգեն։ Ամէն աղջիկ անոր դէմքը տեսնել ու անոր պէս ամուսին մը ունենալ կ'երազէ... Անոր անունը աղջիկներուն սիրտը սէրով, տղաներուն սիրտը վախով կը լեցընէ...

ՕՍՄԱՆ (խորհրդաւոր շեշտով)

Քու սի՞բտդ ալ սէրով կը լեցուէր, ՃԷՄԻԼԷ՛ս, երբ աղջիկ էիր··· (ՃԷՄԻԼԷ շարժում մը կ՚ընէ) հոգ չէ··· բայց դուն հիմա հպարտ ես որ Ասլանին մայրն ես···

ՃԷՄԻԼԷ

Հպարտ, շա՞տ հպարտ···

ՕՍՄԱՆ

Եւ ո՞րքան աւելի հպարտ պիտի ըլլաս, երբ նոր ասլան մը, քու ասլանդ, իմ ասլանս ունենանք··· լեցո՛ւր, ՃԷՄԻԼԷ, լեցո՛ւր, այս մէկն ալ խմենք, դուն ալ ինծի հետ, մեր նոր ասլանին կենացը, և Ասլան բեկին կենացը, որ երթայ ու դայ···

ՃԷՄԻԼԷ (գաւաթները լեցնելով)

Ասլանի պէս կորիճին կենացը երկու հատ խմէ, միչտ խմէ, բեկ··· երնէկ այն աղջիկին, որ անոր կինը պիտի ըլլայ···

ՕՍՄԱՆ (նախանձի ու կասկածանքի շեշտով)

Երբեմն նոյն երնէկը իմ անունիս կուտայինն, երբ երիտասարդ էի···

ՃԷՄԻԼԷ (ծեքծեքումով)

Դուն հիմա ալ երիտասարդ ես, բեկ··· երբ ձիրդ կռնակը կուգաս քսան տարեկան կորիճ կը դառնաս···

ՕՍՄԱՆ

Է՛հ··· ինչո՛ւ ծերացայ··· (ինքզինքը գտնելով) *Լեցո՛ւր, ՃԷՄԻԼԷ, լեցո՛ւր··· երգէ ինծի այն երգը, որ երիտասարդութեան ա-բիւնը բորբոքեց··· երգէ, որ գաւաթս անուշ-նայ···*

ՃԷՄԻԼԷ (կը լեցնէ գաւաթը և կ՚երգէ)

Լուսընկի լոյսով, մաղիս թելերով
Թաշկինակ բաներ եմ կտրիճիս·
Քեզ կըսպասեմ, քաջս, եկուր կռնակն առ
Ձիրդ, աշխարհէ աշխարհ փախցուր զիս ···

ՕՍՄԱՆ (կը գրկէ ու կը համբուրէ ՃԷՄԻԼԷն)

Ձայնիդ ես մատաղ···

(Այս միջոցին Այիշէ կ՚երեւի աջ կողմի դուռին վրայ և վայրկեան մը նախանձի ու զայրոյթի արտայայտութիւն մը կ՚ընէ ու յետոյ ընկնուած կ՚առաջանայ)

ԱՅԻՇԷ

Ներէ, բե՛կ, որ ուրախութիւնդ խանգարեցի··· Ալի էֆէնտին եկեր է··· (ՃԷՄԻԼԷ կը մեկնի ակնարկ մը ձգելով Այիշէի վրայ: Այիշէ ձեռքերը տարածելով՝ աղաչական) *Բե՛կ, տո՛ւր ինձ իմ ազատութիւնս, քսան տարի կինդ եղայ, քեզ սիրեցի, այդ բոլորին փոխարէն այս լքումը··· չէ՛, չեմ կրնար տանիլ այլ*

6737-82

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԻՄ. Ն. ԳԱՐԻՆԻ
им. А. Мясникяна
Ա. ՄԵՍՍՐԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ևս... նիքեահդ ետ առ... քանի ես այս տու-
նին մէջ ուրիշ ոչինչ եմ, բայց եթէ աղախին
մը այդ լեռնցի աղջիկին... Դիա՛, ինձ... ես
ալ կին եմ... քու հաւատարիմ կինդ...

ՕՍՄԱՆ (արգիլող շեշտով)

Է՜... մի՛ սկսիր նորէն քու յաւիտենական
խօսքերդ... դուն կինս ես ու կինս կը մնաս...
քսան տարի քեզ սիրեցի, քու ամուսինդ եղայ
և դուն ինծի զաւակ մը չտուիր...

ԱՅԻՇԷ (վճռական)

Ես չեմ կրնար այլևս մնալ տունի մը մէջ,
ուր անպատուութիւն կը տիրէ... (գլուխը եր-
կարելով) Ահա գլուխս, բե՛կ, կտրէ զայն, ե-
թէ կ՚ուզես, բայց գլուխս դինովն իսկ ես չեմ
կրնար մնալ միևնոյն տունին մէջ այն կնիկին
հետ, որ իմ ամուսինի իրաւունքներն է խլեր,
իմ ամուսինս է խլեր և այդ բոլորին փոխարէն
սիրուհին է...

ՕՍՄԱՆ (ոտքի կանգնելով՝ կատաղի)

Այլիշէ՜, քու լեզուդ կը կտրեմ եթէ.....
Ապացուցո՛ւր ըսածդ կամ եթէ ոչ չունի պէս
կը սատկեցնեմ քեզ, որ իմ ծերութեանս օրերը
կ՚ուզես թունաւորել օձի պէս... ըսէ՛, որի՞
սիրուհին է ձէմիլէն, որ այնքան կը սիրեմ...

ԱՅԻՇԷ (աղաչական բայց խորհրդաւոր)

Դուն ինքզինքիդ հարցուր, դուն քու սիր-
ուիդ հարցուր և ան պիտի ըսէ քեզ թէ ձէմի-

լէն քու հաւատարիմ կի՞նդ է թէ ոչ... բոլոր-
տիքդ նայէ, բե՛կ... անոր վարմունքները քըն-
նէ՛, բե՛կ... և դուն փաստ չպիտի ուզես ի-
նէ... դուն լեզուս կտրել կը սպառնաս, ես
գլուխս կուտամ քեզի... միայն թէ տո՛ւր իմ
ազատութիւնս, եթէ չես տար ինձ քու կինդ
ըլլալու իրաւունքս... վերջապէս, բե՛կ, ես
ալ կին եմ... քար չեմ...

ՕՍՄԱՆ (վրդովուած ու թունաւորուած)

Ա՜խ, կիներ, կիներ... «անպարկեշտ կը-
նիկին ձեռքէն Աստուած ազատէ...» (կատղած)
Բայց չըսիր դո՛ւն, Այլիշէ... կը հրամայեմ
քեզի, ո՞վ է ան...

(Ալի Էֆէնտի կը մտնէ)

ԱԼԻ

Ի՞նչ կայ, բե՛կ, խնդրեմ, հանդարտէ,
խնայէ հանըմին...

ՕՍՄԱՆ (ջղայնոտ)

Է՜... կիներ, կիներ... թունաւոր սև օ-
ձեր...

ԱՅԻՇԷ (դէմքը ծածկելով, աղաչական Ա-
լիին)

Կը խնդրեմ, Ալի էֆէնտի, բարեխօսէ ինձ
համար... դուն բեկին հին բարեկամն ես,
պրոզ-կարդացող մարդ ես... ըսէ՛, թող տայ
իմ ազատութիւնս, թող ղրկէ զիս իմ հօրս տու

նը... ես չեմ կրնար այլևս տանիլ այս աղա-խինութիւնը... (գրեթէ արտասուելով) *քսան տարի զինքը սիրող, իրեն հաւատարիմ կինը եղայ որ այսօր լեռնցի աղջիկի մը աղախինը ըլլամ... Տարի մըն է, Ալի էֆէնտի, տարի մըն է երեսէ ինկած եմ... գիշերներս լալով կ'անցնեմ որպէսզի դուռը արթննայ իր սիրտին մէջ... բայց, ալ անկարելի է... բարեխօսէ՛, Ալի էֆէնտի...*

(Այս միջոցին Օսման ջղայնացած կը քալէ. վերջապէս Այիշէի վերջին խօսքերը իր համբերութիւնը կը սպառեն։)

ՕՍՄԱՆ (սպառնական)

Կորսէ՛, անպատի՛ւ... Մինչեւ վաղը քեզի ժամանակ կուտամ, կամ կ'ապացուցանես ըսածդ կամ այս մատերովս լեղուդ կոկորդէդ կը քաշեմ...

ԱՅԻՇԷ (դիրաւորուած «անպատիւ» բառէն)

Անպատիւը ան է որ ծունկէ ծունկ կը նըստի... (կ'երթայ)

ՕՍՄԱՆ (կատղած՝ քայլ մը կ'առնէ)

Է՛յ... Ալլա՛հ...

(Ալի կը բռնէ Օսմանը, որ բարկութենէն կը դողայ և հանդարտեցնել աշխատելով՝ կը բերէ կը նստեցնէ դիւանին վրայ)

ԱԼԻ

Հանդարտէ, բե՛կ... (օդի մը կը լեցնէ)

խմէ հատ մը... ծոցիր եղածը...

ՕՍՄԱՆ (ջղայնոտ)

Ես, ես Օսման բեկը, շուքէս ու անունէս կը վախնան ուրիշները, իսկ կին մը, կին մը ինծի հետ այդպէս խօսի՛... Չէ՛, մինչեւ որ ես անոր լեղուն չկտրեմ ան չի հասկնար թէ ո՛վ եմ ես...

ԱԼԻ (հանդարտեցնող շեշտով)

Մոռցի՛ր, վաղ անցիր... էրիկ-կնիկի մէջ միշտ խօսք-զրուցք կ'ըլլայ... հանդարտէ...

ՕՍՄԱՆ (գլուխը երերցնելով և մեքենաբար)

էրիկ-կնիկի խօսք-զրուցք ը՛... չէ՛... այս կինը քսան տարի կնիկս եղաւ և տակաւին չհասկցաւ... «ծերացած դայլը շուներուն խաղալիկ կ'ըլլայ...» հա՛... բայց ես կը հասկըցնեմ անոնց թէ ես ի՞նչ տեսակ դայլ եմ...

ԱԼԻ (խօսքը փոխելու միտումով)

Բայց, բեկ, իրաւ որ առածներուն մէջ երբեմն մեծ ճշմարտութիւններ կան, որոնք փորձառութեան արդիւնք են...

Վայրկեան մը լուռ, որի ընթացքին Օսման հետզհետէ մեղմացած ջղայնութեան շարժումներ կ'ընէ։)

ՕՍՄԱՆ (զսպած բարկութիւնով եւ յուսահատ շեշտով)

Ըսէ՛, Ալի՛ էֆէնտի, դուն զրոյ-կարգա-

ցող մարդ ես, աշխարհ ու մարդեր շատ ես տեսեր, ըսէ՛, խրատ մը տուր, ի՞նչ ընեմ ես այս կնիկին ձեռքը...

ԱԼԻ

Այդքան բարկանալու պատճառ չունիս...

ՕՍՄԱՆ (գլուխը երերցնելով)

Տարի մըն է ինչեր կը քաշեմ... ՃԷՄԻԼԷՆ այս տունը ոտք կոխած օրէն ի վեր հոգիս կ՚առնէ այդ կինը... Ուրախութեան, մխիթարութեան վայրկեան մը հազիւ թէ կ՚ունենամ, անպատճառ վերջը աս է: Կարծես միտքը դրեր է այսպէսով մեռցնել զիս...

ԱԼԻ

Նախանձը կնիկի մը երկրորդ պատկերն է...

ՕՍՄԱՆ

Նախանձ, բայց այս տեսակ նախանձ չը տեսնուած բան է:

ԱԼԻ

Մտիկ ըրէ՛, սակայն, բեկ... նախանձը սէրին ուրիշ մէկ անունն է: Եթէ Այիշէ հանըմ կը նախանձի, շատ ալ մի՛ մեղադրեր զինքը, որովհետեւ քսան տարի քեզի հաւատարիմ, քեզ սիրող կին մը ըլլալէ յետոյ երբ այսօր զինքը բոլորովին երեսէ կը ձգես, բնական է որ ան նախանձի....

ՕՍՄԱՆ

Բայց ան քսան տարի կինս եղաւ, զաւակ մը չտուաւ ինծի: Վաղը երբ ես մեռնիմ բեկութիւնս շարունակող մը չունիմ: Ես ՃԷՄԻԼԷՆ առի որ ինծի զաւակ մը տայ...

ԱԼԻ (խմծիծաղով)

Է՜, բե՛կ, միամիտ մի՛ ըլլար այնքան... աշխարհի վրայ ոչ մէկը կրնայ երաշխաւորութիւն տալ այդ բանին մէջ... Եւ մի թէ՞ Այիշէ հանըմը քենէ պակաս կ՚ուզէ որ զաւակ մը ունենայ... կիները, բե՛կ, աւելի խենդ են զաւակի համար քան էրիկները... Նախանձն ու կռիւը բնական է բոլոր այն տուներուն մէջ, ուր մէկ էրիկ մարդ երկու կամ աւելի կին ունի. այդպիսի ատեն գոնէ աշխատելու է նախանձի թոյնը և ատելութիւնը չչատցնել անոնց մէջ... վա՜յ անոր, որ երկու կնիկի ձեռք ինկաւ, երկու կնիկ, որոնց մէջ նախանձն ու ատելութիւնը կայ... Զգուշանալու է, բե՛կ, կնիկի մէջ նախանձ արթնցնելէ, որովհետեւ այն ատեն ճերմակ աղաւնին սև օձ մը կ՚ըլլայ:

ՕՍՄԱՆ

Բայց ինչպէ՞ս կրնամ ես մէկ աչքով նայիլ ՃԷՄԻԼԷՆ ու Այիշէին: Մէկը երիտասարդ, թրվչուն, միւսը տարիքը առած, մարմինը պաղած...

ԱԼԻ

Ճշմարիտ է. այդ քու ձեռքդ չէ... եղածը եղած է. դոնէ պէտք է Այիշէ հանըմին մէջ թոյնը չչատցնես: Ան արդէն իր իրաւունքին մէջ զրկուած կը զգայ և արժանապատուութեան մէջ վիրաւորուած. պէտք չէ նոր վիրաւորանքներ ընել... կնիկի մը զգացումները որքան վիրաւորես, անոր մէջ առաքինութիւնները նոյնքան ճիւաղութիւններու կը փոխուին: Բե՛կ, այն վիրաւորանքը, որ դուն ըրիր Այիշէ հանըմին, այդ արդէն բաւական է որ անոր մէջ մեռնի կնիկութիւնը եւ գլուխ բարձրացնէ օձութիւնը...

ՕՍՄԱՆ

Գիտե՞ս, սակայն, ինչ ըսաւ... Ան այնքան կը նախանձի ճէմիլէին, որ զայն իմ աչքէս ձգելու համար...

ԱԼԻ (ընդհատելով)

Աշխարհի վրայ անկարելի բան չկայ... ճերմակ մազերս վկայ...

ՕՍՄԱՆ

Ի՞նչ... ի՞նչ...

ԱԼԻ

Դո՞ւն ալ կը նախանձիս, բե՛կ... քու հարցումդ արտայայտութիւնն է նախանձիդ... դուն կը մեղադրէիր հանըմը, կը վիրաւորէիր

զինքը որ կը նախանձի: Կը տեսնե՞ս սէրն ու նախանձը մէկ մարմին և մէկ հոգի են: Նախանձող կինը օձ կը դառնայ, նախանձող տըղամարդը՝ գայլ...

ՕՍՄԱՆ

Գա՜յլ... իսլամի կրօնս վկայ...

ԱԼԻ (ընդհատելով)

Բոլոր կրօններէն վեր ու զօրաւոր բնութեան կրօնը կայ...

ՕՍՄԱՆ

Այսի՛նքն...

ԱԼԻ

Այսինքն, ով որ կը կարծէ թէ աշխարհի վրայ ինք ամենէն զօրաւորն է, ո՛վ որ կը հաւատայ թէ իր զգացումներն ու հաւատալիքները յաղթող են ու ուժեղ, ով որ կը խորհի թէ իրենն է իրաւունքը, որովհետեւ ուժ ունի և դրամ, ան չարաչար կը սխալի, որովհետեւ բոլոր ուժերէն, հաւատալիքներէն ու կրօններէն վեր կայ բնութեան օրէնքը. իսկ մարդը այդ օրէնքին մէկ արդիւնքն է: Եւ մի՛ մոռնար, բե՛կ, որ սիրտը, մարդին մէջ, բնութեան ամենէն մօտն է...

ՕՍՄԱՆ (հասկնալ ճգնելով՝ Ալիին խօսքերը, ընկճուած՝ գրեթէ մեքենաբար)

Ուրեմն կրնան պատահիլ բոլոր անոնք...

ԱԼԻ (ընդհատելով)

Ամէն բան, ամէն բան...

ՕՍՄԱՆ (ուժգին)

Բոլո՞ը... (լռութիւն) դաւ... սպանութիւն... (ջղայնոտ, ձեռքը պէխին ու մօրուքին կը տանի) բոլո՛ը...

ԱԼԻ

Ի՞նչ բառեր են ատոնք, բե՛կ...

ՕՍՄԱՆ

Բոչան, բաղդ նայող բոչան ըսաւ: Բաղդս նայեցաւ և... ուրեմն ՃԷՄԻԼԷ՞Ն ալ... (լռութիւն) Ես խնդացի իր վրայ, եւ ան վիրաւորուած աւելցուց. «օրերդ համբուած են...»

ԱԼԻ (խնդալով և Օսմանը հանդարտեցնելու միտքով)

Է՛, ի՞նչ կարեւորութիւն կուտաս բոչաներուն...

ՕՍՄԱՆ

Բայց դո՛ւն ըսիր որ կրնայ պատահիլ բոլորը...

ԱԼԻ

Այո՛, ես ըսի որ աշխարհի վրայ կրնայ ամէն բան պատահիլ, բայց այդ չի նշանակեր որ քեզի պիտի պատահի: Բոչան ըսեր է որ օրերդ համբուած են... ի՞նչ կայ ատոր մէջ. աշխարհի վրայ որի՞ օրերը անհամար են. ճարպիկ բոչա մը կրնայ մազերը նայիլ եւ բաղդը ըսել...

ՕՍՄԱՆ

Բայց ան ըսաւ նաև «դաւ... նախանձ...» Ի՞նչ դիտեր իմ ներքին կեանքս, ո՞ւրկէ դիտէր որ նախանձոտ կին մը ունիմ: Դուն ալ ըսիր, Ալի էֆէնտի, որ նախանձոտ կին մը օձ է... ահա Այիշէն... որ ամբողջ կեանքս թունաւորեց... (լռութիւն): «Կը սիրես... չես սիրուիր...»... «Աշխարհի վրայ ամէն բան կրնայ պատահիլ...» արդեո՞ք ՃԷՄԻԼԷՆ կը կեղծէ. արդեո՞ք Այիշէին ըսածները ճիշդ են.. բայց.. եթէ այդպէս է... եթէ... (մտածկոտ) Ինչո՞ւ ՃԷՄԻԼԷՆ տխրեցաւ, երբ ըսի իրեն որ Ասլանը պիտի երթայ... ինչո՞ւ անոր կեանքը խմեց... (ոտքի կ'ելնէ և բոլորովին ջղայնոտ) «Աշխարհի վրայ ամէն բան կրնայ պատահիլ...» Զէ՛... այս թոյնը սոսկալի է... այս թոյնը սոսկալի է, Ալի էֆէնտի.... կարծես կը զգամ թէ բոչային ըսածները բոլորը ճիշդ են... ան գիտէր բոլորը... չուզեց ըսել... ինչո՞ւ ես ուզեցի գիտնալ... կը զգամ թէ սպանութիւններուս վախճանը չէ եկեր.... ծերութեանս օրերը ուզեցի տաք կուրծք մը գրկել ու պաղ օձ մը կը զգամ գիրկիս մէջ... (մեքենաբար) ը՛.. (պոռթկալով) Եթէ ճիշդ է, Ալի էֆէնտի, այնպիսի հարսնիք մը կը սար-

քեմ անոնց համար որ աշխարհ չէ լսեր...

ԱԼԻ (Կանգնելով և fովը երթալով)

Հանդարտէ՛, բեկ... դուցէ քու կասկածներդ բոլորովին անհիմն են... Ես այստեղ եկայ քիչ մը խօսելու, իսկ դուն...

ՕՍՄԱՆ (ընդհատելով)

Շատ գէշ օր եկար այսօր, և քու խօսքերդ շատ գէշ բաներ ըսին այսօր, Ալի էֆէնտի...

ԱԼԻ

Հանդարտէ՛...դուն ըսիր որ Ասլանը կ'երթայ արդէն... փոխանակ միտքդ տանջելու, թող որ երթայ: Այս օրերուն դայդողը ետ չի դառնար...

ՕՍՄԱՆ

Է՛... գըսմէք...

(Դուրսէն Ասլանի ձայնը կուգայ)

ԱՍԼԱՆ (դուրսէն)

Հէ՛յ... անասուածնե՛ր... անասուածնե՛ր... (արագ կը մտնէ աջ դուռէն և առանց նկատելու ներկաները կը վազէ բակօնը) *Բացէ՛ք, դուռերը բացէք, ներս առէք այդ խեղճերը... Այս դազանութիւնը ոչ մէկ կրօնք, ոչ մէկ աստուած կը տանէ...* (դուրսէն վայնասունի ձայներ, խարազանի շաչիւններ և հայհոյանքներ) *Հէ՛յ, զայրմներ... Հիւսէ՛յն... Հիւսէ՛յն... ձիս պատրաստէ... այստեղ ապրիլը հարամ է այլեւս...* (Օսման անակնկալի

եկողի պէս Ալիին հետ դէպի բակօնը կ'երթայ)

ՕՍՄԱՆ

Ասլա՞ն...

ԱՍԼԱՆ (դէպի ձայնը դառնալով)

Հա՛յր, հրամայէ՛ խօլամներուդ թող դուռերը բանան այս խեղճ կիներուն ու մանուկներուն առջև... ասպետութեան դէմ է, հա՛յր, դուռը ինկածը չպաշտպանել... (դուրսէն կը շարունակէ ողբուկոծի և հայհոյանքի ձայնը) *Հէ՛յ անասուածներ... երիկները տարին, եղբայրները տարին, ի՞նչ կ'ուզեն այս ծերերէն ու մանուկներէն...*

ՕՍՄԱՆ

Թագաւորին հրամանն է, տղաս... եթէ դուռերը բանան ու ներս առնեն, ամբողջ տունը կ'այրէ կառավարութիւնը...

ԱՍԼԱՆ

Գիւղը այրելէ յետոյ թող այս տունն ալ այրեն: (Դուրսէն ձայները կը շարունակեն) *Տե՛ս, անոնց վիճակը, հայր...*

ՕՍՄԱՆ

Թագաւորին հրամանն է...

ԱՍԼԱՆ (Զսպված կատաղութիւնով)

Թագաւորին հրամանը... (պոռթկալով) *Այդ ի՞նչպէս թագաւոր է...*

ՕՍՄԱՆ (ընդհատելով)

Սո՛ւս, Ասլա՛ն, եթէ լսեն, լեզուդ կը կըտրեն։

ԱՍԼԱՆ

Ի՞նչ պիտի ընեմ այնպիսի լեզուն, որ չպիտի խօսի, երբ քարերը կը խօսին... Տո՛ւր ինձ իշխանութիւնդ, հա՛յր, տո՛ւր ինձ իշխանութիւնդ, և թող լեզուս կտրեն, թող գլուխս կտրեն... Հա՛յր, այս գիւղացիներուն բեկն ես դուն, պաշտպանէ անոնք, դուն կրնաս ազատել անոնք ժանդարմներու ձեռքէն... հրամայէ՛, թող դուռը բանան...

ԱԼԻ

Ո՛վ որ թագաւորին հրամանին դէմ կ՚երթայ, անոր պատիժը մահ է...

ԱՍԼԱՆ (կատղած)

Ո՛վ որ անզէններ, ծերեր, կիներ ու մանուկներ կը կոտորէ, ան վա՛տ է. եւ այն որ չի պաշտպաներ իր դուռը ինկած խեղճը, ան ասպետութեան դէմ դաւաճան է...

(Դուրսէն ողբուկոծի մէջէն ձայներ կը հասնին) «Բե՛կ, բե՛կ... քու դուռդ ենք ինկեր, ազատէ մեզ...»

ԱՍԼԱՆ (Օսմանի ձեռքէն բռնելով բակլաները կը քաշէ)

Տե՛ս, քու աչքերովդ տես, հա՛յր... ասպետութեան անունով, ազատէ անոնք...

ՕՍՄԱՆ (գլուխը կախած կը հեռանայ բակլաներէն)

Թագաւորին հրամանն է...

ԱՍԼԱՆ (կատղած)

Թագաւորին հրամանն է... ի՞նչ ընեմ ես այդ տեսակ թագաւորը... (Օսման և Ալի դանդաղօրէն կ՚երթան դէպի աջ դուռը։ Դեռ դուռին վրայ) Հէլա՛լ ըրէ ինձ, հայր, հէլալ ըրէ հացը, որ կերցուցիր քսան տարի... հէլալ ըրէ, եթէ քեզի հանդէպ իմ ունեցած յարգանքով չկրցայ փոխարինել հացդ... Զեմ գիտեր ուրկէ եկայ... բայց գիտեմ այսօր թէ ո՞ւր կ՚երթամ... Ասպետութիւնս զիս կը կանչէ... հէլալ ըրէ, եթէ այլեւս չդառնամ...

ՕՍՄԱՆ

Հէլալ ըլլայ... (մեկնելու ատեն) Արիւնը ջուր չըլլար...

(Ասլան մինակ, տխուր, վայրկեան մը լուռ... ներսէն ճէմիլէի երգին ձայնը կուգայ։ Ձայնին վրայ Ասլան կըսթափի)։

ԱՍԼԱՆ

Հէ՛յ, աշխարհ, աշխա՛րհ... մէկը կ՚երգէ, հազարներ կուլան...

ՀԻՍԷՑՆ (Դուռին վրայ երեւալով)

Ձիդ պատրաստ է, Ասլա՛ն...

ԱՍԼԱՆ

Լա՛ւ... պատրաստուէ դո՛ւն ալ, իմ հաւա-

տարիմ բարեկամս, որ հօրմէս աւելի գուրգուրացեր ես կեանքիս վրայ և ասպետութեանս անբաժան ընկերն ես եղեր.. պատրաստուէ, եթէ կ'ուզես վերջին անգամ չբաժնուիլ ինէ.... Այս երթալը ուրիշ երթալ է, Հիւսէյն, երթալ՝ չդալ կայ... (պատէն կրսկսի զէնքերը առնել և կապել) Ես զէնքերս կապեմ, կուգամ...

ՀԻՍԷՅՆ

Քեզի հետ եմ, Ասլա'նս... դուն իմ ձեռքս ես մեծցեր, քեզ մինակ չեմ թողուր... (կ'երթայ):

ԱՍԼԱՆ (զէնքերը կապելով կը զբաղի. ատրճանակը կ'առնէ և վրան նայելով) Դուն, որ ասպետութեանս մէջ հաւատարիմ ընկերս եղար, եկուր այսօր ալ ինձ հետ... Դուն, որ ասպետութեանս երբէք չդաւաճանեցիր, ու կորիճի մը վրայ բընաւ կրակ չբացիր, եկուր այսօր ալ ինձ հետ.. Այսո՜ր... և ի՜նչ օր... (ՃԷՄԻԼԷԻ երգին ձայնը կուգայ ներսէն) «Ամէն չարիքի մէջ բարիք մը կայ» կ'ըսեն... Երթա՜մ, երթամ սգաւոր ներու հետ, գոնէ ազատիմ անոր ձեռքէն, որ իրը փորձութիւն ասպետութեանս դուռը կը բաղխէ ամէն օր. ու ես կը վախնամ թէ օր մը անոր չունչին առջեւ ասպետութեանս պողպատ դուռերը խորտակուին... Երթա՜լ, երթա՜լ... այդ է մնացեր ինձ միակ միջոց օգնելու՝ գա-

ցողներուն, փախելու՝ մնացողէն... ՃԷՄԻԼԷՆ... (Ձախ կողմի դուռին վրայ կ'երեւի ՃԷՄԻԼԷ տխուր ու հրապուրիչ: Դուռին կրթնած վայրկեան մը հիացմունքով կը նայի Ասլանին, որ չնկատեր ՃԷՄԻԼԷՆ: ՃԷՄԻԼԷ աջ ձեռքը գաւաթ մը գինի բռնած՝ կ'առաջանայ)

ՃԷՄԻԼԷ

Ուղուր ըլլայ, Ասլան բեկ... Դուն մնաս բարովի չես դար ինծի, ես երթաս բարովի կուգամ քեզի դաւաթ մը կարմիր, կարմիր գինիով... Աշխարհը մահ կայ, Ասլան բե՛կ, պէտ մուրատ մահ կայ... Դաւաթ մը գինի խմէ ձեռքէս ու նորէն դնա... (կը մօտենայ Ասլանի, գաւաթը երկարած ու նազանքով) Դացողը կ'երթայ, Ասլան, վա՜յ անոր ետեւ մնացող անմուրազ սիրողին... Քեզ պէս դացողին դաւաթ մը գինի իմ ձեռքէս, Ասլան, մխիթարանք է... կ'երթաս, կը մեռնիս, ու այն ատեն ես նստած կուլամ, կուլամ ու կ'երգեմ թէ վերջին անգամ իմ ձեռքէս խմեց...

ԱՍԼԱՆ (ձնուած ու ինքն իր մէջ պայքարելով)

Ես ո՞ւր փախիմ քու ձեռքէդ, ՃԷՄԻԼԷ, դուն չե՞ս հասկնար թէ ո՛վ ես դուն և ո՛վ եմ ես... դո՛ւն կինն ես անոր, որ ես հայր կ'ընդունիմ... ինչո՞ւ այս վերջին վայրկեանին դուն կուգաս ասպետութեանս ճամբային վը-

բայ··· լեռներն ու քարերը ինչ կը փախին, ես չեմ գիտեր ո՞ւր փախիմ քու ձեռքէդ···

ՃԷՄԻԼԷ

Երբ չերքեզի աղջիկն է սիրողը, ասլաններն ալ չեն կրնար փախիլ անոր ձեռքէն··· բայց դո՛ւն, դո՛ւն ուրիշ Ասլան ես, դուն կ'երթաս, դուն կը փախիս··· Ուզո՛ւր ըլլայ···միայն մէկ դաւաթ, միայն մէկ դաւաթ խմէ իմ ձեռքէս··· աչխարհը մեռնիլ կայ··· (Ձախ ձեռքը վիզին կը տանի և իր ձեռքով գաւաթը Ասլանի շրթունքին կը տանի)

ԱՍԼԱՆ (Թոյլ չտալով՝ որ իր վիզը գրկէ)

Կ'առնեմ այդ դաւաթը, Ճէմիլէ, (իր ձեռքը կ'առնէ) կը խմեմ զայն, ինծի տրուած իբր իմ մօրս կողմէ···

ՃԷՄԻԼԷ

Մա՛յր··· մի՛ կրկներ այդ բառը, Ասլան մի՛ կրկներ, որովհետեւ քանի դուն զիս մայր կոչես, ես հայրդ կ'ատեմ···

ԱՍԼԱՆ

Ճէմիլէ՛···

ՃԷՄԻԼԷ

Ես ծերուկի մը սարուկը եղայ քու սէրիդ համար, Ասլան, քու անունդ լեռներն ըսին ինձ ու ես գիշերները երազիս մէջ տեսայ քեզ··· լսէ՛, դոնէ այսօր, երբ կ'երթաս, լսէ՛, Ասլան կը սիրեմ քեզ···

ԱՍԼԱՆ

Իսկ եթէ ես ատեմ քեզ···

ՃԷՄԻԼԷ

Այն ատեն ես աւելի պիտի սիրեմ քեզ ու աւելի պիտի ատեմ քու հայրդ··· հայրդ, որ իմ ու քու մէջտեղ է կանգներ···Դուն քար չես, Ասլան, գիտեմ, դուն քար չես, դուն սիրտ ունիս, սիրտ՝ իմ սիրտիս պէս··· բայց հայրդ··· և ես քու մա՛յրդ··· ա՜հ, կ'ատեմ, կ'ատեմ այդ բառը···

ԱՍԼԱՆ (խմելով)

Մնաս բարո՛վ, Ճէմիլէ···

ՃԷՄԻԼԷ (գրկելով Ասլանը)

Կ'երթա՞ս··· (աղաչական) Ասլան··· երեսը մօտեցնելով Ասլանի շրթունքին) համբուրէ՛ զիս··· անգամ մը, անգամ մը միայն··· համբուրէ՛ իբր ինչ որ կ'ուզես, ես անոր մէջ քու սէրդ կը խմեմ··· միայն թէ համբուրէ··· (Ասլան կը նգնի ազատիլ ձեռքէն) Կ'երթաս, Ասլան, ալ չես դառնար··· համբուրէ զիս···

ԱՍԼԱՆ

Ասպետ մը չի դաւաճաներ իր հօրը···

ՃԷՄԻԼԷ

Վա՜յ այն հօրը···

(Դուռին վրայ կ'երեւին Օսման և Այիշէ;

Այիշէ մատնացոյց կ'ընէ Ասլանն ու Ճէմիլէն։ Օսման կատաղօրէն վեր բարձրացուցած բռունցքները)։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐԻԱԾ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Տեսարանն է առաջին արարածի պատկերը։ Իրիկնադէմ։ Վարագոյրը բացուելէ առաջ Ճէմիլէին երգի ձայնը կուգայ եւ վարագոյրը կը բացի երգի վերջին տողը երգած ատեն։ Վարագոյրը բացուելուն Ճէմիլէ առանձին կանգնած է բալկօնը։ Բեմին խորը կ'երեւի գիւղը մխացող։ Մայրամուտի ճառագայթները կը նուաղին մխացող գիւղին վրայ։

Ճէմիլէ առանձին (կ'երգէ)

Գացիր, հէ՛յ անդութ, սիրոս հետըդ տարիր.
Գացած ճամբաներդ վարդեր թող բուսնին...
Երնէկ աչքերուն որ դարձդ կը տեսնեն.
Դարձի ճամբայիդ մատաղ իմ հոգին...

Ճէմիլէ (տխուր ու յուսահատ)

Իջի՛ր, խաւար, իջի՛ր... ինչպէս մահը կ'իջնէ հոգիիս վրայ...

(Այս միջոցին աջ կողմէն բեմ կը մտնեն Օսման և Այիշէ։ Այիշէ կը գուրգուրայ Օսմանի վրայ, որ ընկնուած երեւոյթ ունի։ Այիշէ կը բերէ Օսմանը, կը նստեցնէ դիւանին վրայ,

ինքն ալ քովը նստելով։ Երկուքն ալ չեն նկատեր Ճէմիլէն, որ կոնակը դէպի անոնք խորասուզուած է տխրութեան մէջ։)

ՕՍՄԱՆ (ընկնուած)

Նստէ՛ քովս, Այիշէ... ներէ ինծի որ քու յարդդ չգիտցայ... ես մեղք գործեցի քու առջեւ, եւ ես դիտեմ իմ մեղքս քաւել... Դուն որ ինձ զաւակ մը չուիր, բայց միշտ հաւատարիմ մնացիր, ուզէ՛, ի՞նչ կ՚ուզես քու հաւատարմութեանդ փոխարէն։

ԱՅԻՇԷ

Քու ողջութիւնդ, բե՛կ, քու սէրդ... Ինչ որ դուն ունիս իմս է արդէն...

ՕՍՄԱՆ

Բայց ես կ՚ուզեմ վարձատրել քեզ. դարմանել այն վէրքը որ սիրտիդ վրայ բացի քու սէրդ ուրիշին տալով... (հառաչելով)— *Է՛հ, ծերութիւն, ծերութիւն, որ մանկութեան չափ միամիտ ես...* (վայրկեան մը լուռ. յետոյ ինքզինքը գտնելով) *Քեզի՛, Այիշէ՛, քու հաւատարիմ սիրտիդ ես ընծայ պիտի տամ այն սիրտը, որ ես սիրեցի և որ զիս խաբեց... ը-սէ՛, կ՚ուզե՞ս Ճէմիլէին սիրտը...*

ԱՅԻՇԷ (գոհ բայց կեղծելով)

Ինչե՛ր կը խօսիս, բե՛կ...

ՕՍՄԱՆ

Այո՛, թող աշխարհ լսէ ու զարմանայ թէ

ի՛նչպէս գիտէ պատժել Օսմանը, երբ սիրան է վիրաւոր... (լռութիւն)

ՃԷՄԻԼԷ (հառաչելով)

Հէ՛յ զալըմ աշխարհ, ուր սիրածը սիրածին չի հասնիր բնաւ...

(Օսման և Այիշէ կը դառնան դէպի ձայնը եւ կը տեսնեն Ճէմիլէն, որ միշտ միեւնոյն դիրքին մէջ է։)

ԱՅԻՇԷ (կամաց)

Սիրականին ետեւէն կուլայ...

ՕՍՄԱՆ (կատղած ոտքի կանգնելով եւ խօսքը Ճէմիլէին ուղղելով)

Հոգ մի՛ ըներ, չերքեզի աղջի՛կ, շուտով սիրածիդ կը հասնիս...

ԱՅԻՇԷ (ոտքի ցատկելով կը բռնէ Օսմանը եւ աղաչական)

Հանդարտէ՛, բե՛կ, հանդարտէ՛... (Ակնարկ մը կը նետէ Ճէմիլէին վրայ, որ Օսմանի ձայնին վրայ ետ դարձած ու տեսած է Օսմանն ու Այիշէն։ Ճէմիլէի եւ Այիշէի հայեացքները վայրկեան մը իրարու գամուած կը մնան. յետոյ Այիշէ արհամարհական դէմք մը ընելով՝ կը դառնայ Օսմանին, որ կատաղութենէն ջղայնոտած է։) *Հանդարտէ, բեկս, խնայէ դուն քեզի։*

ՕՍՄԱՆ կատղած և բռունցքները բարձրացնելով)

Ես ցոյց կուտամ աշխարհին թէ ինչպէս կրնամ չորին հետ թացն ալ այրել... Դո՛ւն... դո՛ւն... երկուքդ ալ մէկ դանակով... երկուքդ ալ մէկ փոսի մէջ... թող աշխարհը իմանայ թէ Օսմանը կրնայ մէկ դանակով միացընել երկու սիրող սիրտերը...

ՃԷՄԻԼԷ (քայլ մը առնելով եւ բազկատարած) *Բե՛կ...*

ՕՍՄԱՆ (աւելի կատղած)

Պապանձէ՛...

ԱՅԻՇԷ (գրկած Օսմանը և հանդարտեցնել աշխատելով՝ արհամարհական և սաստող ակնարկ մը կը ձգէ ՃԷՄԻԼԷԻՆ վրայ և Օսմանը կը բերէ դիւանին վրայ)

Հանդարտէ՛, բեկս, Ասլանը մեղք չունի, զայն գլուխէ հանողը այդ ջղիկն է։ Դուն քու ականջներով լսեցիր որ ան կ'ըսէր. «ասպետ մը իր հօրը չի դաւաճաներ...»

ՕՍՄԱՆ (կտրուկ)

Մի՛ խօսիր այդ մասին, Այիշէ... սիրողին յանցանքը այնքան մեծ է, որ սիրողին արիւնը չի բաւեր զայն քաւելու. սիրուողին արիւնն ալ պէտք է... Ասլա՛ն... քսան տարի ես հաց եմ կերցուցեր, քսան տեսակ, պուտ պուտ արիւն ես քիթէն կը բերեմ անոր... (ջղագրգիռ) *Կանչէ՛ Հասանը, Այիշէ՛, թող այստեղ գայ...*

ԱՅԻՇԷ (դէպի աջ դուռը կ'երթայ)

Հասա՛ն, Հասան...

ՀԱՍԱՆ (դուրսէն)

Հանըմ...

ԱՅԻՇԷ

Բեկը քեզ կը կանչէ...

(Այիշէի դէպի դուռը երթալու ատեն Օսման ոտքի կանգնած ջղային շարժումներ կ'ընէ։ Այիշէ ետ կը դառնայ և կ'աշխատի հանդարտեցնել փայփայանքներով։ Հասան կ'երևի դուռին վրայ։)

ՕՍՄԱՆ (Հասանին՝ հրամայական)

Հասա՛ն, ձիդ հեծիր, ա՛ռ քեզի հետ քանի մը հոգի և գնա՛ Ասլանին ետևէն։ Ողջ-ողջ բե՛ր ինծի եթէ բռնես. զա՛րկ եթէ չկրնաս. իսկ եթէ դիակը գտնես, ճղքէ կուրծքը ու սիրտը ինծի բեր... կամ Ասլանին սիրտը բե՛րես կամ դուն ալ չգաս։ Գնա՛...

ՀԱՍԱՆ (անակնկալ հրաման մը առնողի երեւոյթով)

Բե՛կ...

ՕՍՄԱՆ (կտրուկ)

Ո՛չ մէկ խօսք... Օսման բեկն է քեզ հրամայողը... գնա՛, հրամանս կատարէ...

(Հասան կը մեկնի)

ՃԷՄԻԼԷ (որ մինչեւ այդ ատեն տխուր ու արձանացած կանգնած էր, խելագարի պէս դէ-

պի Օսման բեկը կը վազէ և ոտքը կ'իյնայ։)

Բե՜կ, բե՜կ... խնայէ Ասլանին, ես եմ մեղաւորը...

ՕՍՄԱՆ (ոտքով զարնելով ՃԷՄԻԼԷԻՆ)

Ես չհարցուցի թէ ով է մեղաւորը... Օսման բեկին սիրտն է պատուեր... սիրուողը նոյնքան մեղաւոր է որքան սիրողը.... Դուն զիս խաբեցիր... (ձեռքերը բարձրացնելով) *ա՛, ֆահիշէ՛... որքան խաբեցիր, նոյնքան պիտի տանջեմ քեզ... Ես Օսման բեկն եմ.... հազար Ասլան կըսպանեմ եթէ զիտնամ թէ հազար անգամ սիրող կրնամ պատռտել...*

(Տեսարանի ամբողջ ընթացքին Այիշէ մէկ կողմ կանգնած երբեմն գոհունակ, յանախ արհամարհական ակնարկներ կը ձգէ ՃԷՄԻԼԷԻ վրայ)

ՃԷՄԻԼԷ (Այիշէ արհամարհական եւ լուռ կը մնայ)

Բե՜կ, բե՜կ... իմ սիրտս սիրեց, իմ սիրտը խաբեց, (կուրծքը բանալով) *ահա իմ մեղքիս համար... պատռէ կուրծքս, բայց խնայէ Ասլանին. մի՛ մտներ արիւնը կորիճի մը, որի դիակին վրայ քարերը պիտի լան...* (Օսման անգութ ու լուռ կը մնայ։ ՃԷՄԻԼԷ կանգնելով և Այիշէ հանրմին դառնալով) *Այիշէ՛ հանրմ, դուն միջնորդէ, Ասլանը մեղք չունի... Ես մեղք գործեցի, ես պատրաստ եմ իմ մեղքս մահովս քաւելու... Դուն մահս կը բաղ*

ձայիր, մուրազդ առիր... արիւնս քեզի հէլալ թող ըլլայ, միայն խնայել տուր Ասլանի կեանքը...

(Այիշէ արհամարհական եւ լուռ կը մնայ)

ՃԷՄԻԼ

Բե՜կ... բե՜կ... խնայէ անոր...

ՕՍՄԱՆ (կատղած)

Կորսուէ՛ աչքէս... Երեքէն մինչև ինը նիֆեահս ետ կ'առնեմ... Դուն մահապարտ մըն ես և պէտք է մեռնիս իբր պոռնիկ մը... նե՛ր...

(ՃԷՄԻԼԷ յուսահատ որ իր աղաչանքները չեն լսիր, և վիրաւորուած Օսմանի բառէն ցընցում մը կ'ունենայ և իր կանացի հպարտութեանը տիրանալով վայրկեան մը շեշտակի կը նայի։ Լռութիւն։ Կամաց կամաց ՃԷՄԻԼԷ կ'երթայ դէպի ձախ դուռը։)

ՃԷՄԻԼԷ (դուռին վրայէն)

Զէրքէզի աղջիկը թէ՛ սիրել գիտէ թէ՛ մեռնիլ գիտէ... (կը մտնէ սենեակ)

(Լռութիւն)

ԱՅԻՇԷ (աղաչանքով)

Բե՜կ... բե՜կ... արեւիդ սիրուն, խնայէ Ասլանին... ետ կանչէ Հասանը... ան մեղք չունի... ինքն ալ խոստովանեցաւ որ ան յանցանք չունի...

ՕՍՄԱՆ (հրամայական)

Ո՛չ մէկ խօսք...

ԱՅԻՇԷ (աւելի աղաչական)

Բե՛կ...

ՕՍՄԱՆ (կատղած)

Ո՛չ մէկ խօսք, ըսի... Գնա՛, ըսէ՛ աղա-խիններուն որ հսկեն այդ պոռնիկին վրայ.... Մինչև գիշեր Հասանը եւ կը դառնայ... Այս գիշեր ես հարանիք պիտի սարքեմ, մահի հարա-նիք, որ աշխարհը չէ տեսեր... (Այիշէ ընկնը-ւած կը մեկնի աջ դուռէն։ Օսման առանձին)

ՕՍՄԱՆ (վայրկեան մը լուռ)

Ը՛... «աշխարհի վրայ ամէն բան կարելի է...» (վնռական) *Թող տեսնէ ուրեմն աշ-խարհ, որ սիրուողին սիրտը սիրողին կը կերցը-նեն և անոր դանկով գինի կը խմեն...* (լուռ) *Կարելի՛ է... Ասլանին սիրտը քեզի՛ ճէմիլէ... քու սիրտդ ալ ինձի...*

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Տեսարանը կը ներկայացնէ ամայի վայր մը։ Խորը սարեր կը բարձրանան. սարերուն ոտքը ճամբայ մը, որ երկուքի կը բաժնուի. մէկ ճամբան սարերու մէջ կը կորսուի, միւսը կ'երկարի դէպի դաշտ, որ բեմը կը ներկայացնէ։ Արեւը արդէն մարը մտած է։ Երկինքը ամպամած է։ Վարագոյրը բացուելուն ուինաւոր ժան-

դարմ մը բեմ կը մտնէ. ետեւէն խումբ մը տղամարդեր, կիներ, ծերեր և մանուկներ, ո-րոնցմէ ոմանք մայրերուն գիրկն են, ոմանք ալ մայրերու փէշերէն կախուած են. կուգան, կը խոնարհին երկու ճամբային մէջտեղը։ Երկրորդ ժանդարմ մը անոնց ետեւէն հայհոյելով, հրմշտկելով և խարազանը շաչեցնելով բեմ կը մտնէ։)

Ա. ԺԱՆԴԱՐՄ (պօռալով)

Տղամարդերը մէկ կողմ, կիները միւս կողմ...

(Բազմութեան մէջ ողբ ու կոծ կըսկսի։ Սարսափի տակ գլուխը կորսնցնողի շարժումներ կ'ընեն բոլորը։)

Ա. ԺԱՆԴԱՐՄ (խարազանը շաչեցնելով)

Կիները մէկ կողմ, ըսի... Այստեղէն պիտի բաժնուին...

(Տեսնելով որ իր հրամանը չի կատարուիր, կը մտնէ բազմութեան մէջ, կը զարնէ, կը հրմշտկէ և բ. ժանդարմին հետ կը բաժնէ կիներն ու տղամարդերը։ Այս ատեն ոմանք իրար գրկած կուլան ու կ'ողբան. մանուկներ իրենց ծնողքներու փէշերէն կախուած կը ճչան։ Ողբ ու կոծ... Երկինքի ամպերը կը խտանան. անձրեւի նշաններ. որոտումի ձայներ կը լսուին եւ կայծակ կ'երեւի։)

Ա. ԺԱՆԴԱՐՄ

Հայտէ՛, արա՛գ.... Տղամարդերը այդ ճամբայէն։ (Ցոյց կուտայ սարերու մէջ անհետացող նամբան։) Բ. ԺԱՆԴԱՐՄԻՆ։) *Հայտէ՛..*

(Վայնասուն եւ խունապ)

ՏՂԱՄԱՐԴԵՐՈՒ ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ (Ողբաձայն)

Մնաք բարո՛վ... մնաք բարով...

(Տղամարդերու բազմութիւնը ժանդարմի խարազանին տակ հետզհետէ կ'անհետի։)

ԿԻՆԵՐ (ողբաձայն)

Աստուա՛ծ... Աստուա՛ծ... մենք ո՞ւր պիտի մնանք...

ՈՒՐԻՇՆԵՐ (լալով)

Աստուած է խուլցեր, մեր ձայնը չի լսեր... Աստուած է կուրցեր, մեր ցաւը չի տեսներ...

ՈՒՐԻՇՆԵՐ

Աստուած է տաճկցեր...

ԺԱՆԴԱՐՄ (խարազանը շաչեցնելով)

Հայտէ՛... շատ մի՛ տոտռաք... (սարերու ոտքի նամբան ցոյց տալով) *Այս ճամբայէն... հայտէ՛...*

ԿԻՆ ՄԸ (գիրկը երախայ մը)

Բէ՛յ-էֆէնտի... թող տուր քիչ մը հանդչիմ... Աստուածդ սիրես.. վերն Աստուած կայ, բէյ-էֆէնտի... թեւերս ալ չեն կրնար երախաս տանիլ...

ԺԱՆԴԱՐՄ (կոծտ)

Ի՞նչ ընեմ... նետէ՛...

ՈՒՐԻՇՆԵՐ (ողբաձայն)

Բէ՛յ-էֆէնտի, Աստծոյ սիրուն, քիչ մը հանդչինք...

ԺԱՆԴԱՐՄ (բարկացած)

Հանդչիլ—մանդչիլ չկայ... քալեցէ՛ք.... (խարազանը կը շաչեցնէ) *Հայտէ՛, նայիմ... Զէ՞ք տեսներ գիշերը եկաւ, երկինքը հիմա կը փլի...*

ԿԻՆԵՐ (ողբաձայն)

Ա՛խ, գիշերը դար ու ալ չլուսնար... երկինքը փլէր ու մեզ թաղէր...

(Կայծակ և որոտում)

ԺԱՆԴԱՐՄ (խարազանելով՝ կիները, որ խունապի մատնուած են)

Հայտէ՛, ըսի ձեզի... հայտէ՛...

(Ոմանք վայնասունով կ'առաջանան. երեխայ մը նամբային եզերքը ինկած կը նչայ. կին մը, անկարող քալելու, կ'իյնայ կիսամեռ։ Այս միջոցին սարերու ետեւէն բարձր աղաղակ և վայնասուն, որոնց կը յաջորդէ հրացանների համազարկ մը։)

ԿԻՆԵՐ (վայնասունով)

Մեռցուցի՛ն... մեռցուցի՛ն...

(Ողբ, կոծ ու խունապ... կայծակ, որո-

տում և տեղատարափ... կիներ գլուխները կորսնցուցած ամէն մէկը կողմ մը կը վազէ։ Բեմին վրայ կը մնայ մանուկ մը, որի ճիչը կը կտրի շուտով՝ և պառկած կին մը, որկը հոբնդայ։)

(Վայրկեան մը բեմը այս վիճակին մէջ)

(Թուրք մը մէկ ձեռքը հրացան, միւս ձեռքով 21 տարեկան աղջիկ մը բռնած թեւէն քաշ կուտայ ետեւէն։ Կին մը (մայրը) կէս խելագար, ուսէն վիրաւոր, աղջիկին փէշէն բռնած՝ կը քաշէ արգիլելու համար, որպէսզի թուրքը չտանի աղջիկը, բեմ կը մտնեն։)

ՄԱՅՐԸ

Չե՛մ թողուր, չե՛մ թողուր աղջիկս... զիս ալ տար...

ԱՂՋԻԿԸ (լալով)

Մայրի՛կ... մայրի՛կ...

ԹՈՒՐՔԸ (միշտ քաշելով)

Գէ՛կ, հէյ շուն... ինչ ընեմ ես քեզ....

ՄԱՅՐԸ

Չե՛մ, թողուր, չե՛մ թողուր...

ԹՈՒՐՔԸ (հրացանին կոթով կը զարնէ մօրը, որ գետին կ'իյնայ և կը քաշկռտէ աղջիկը)

Քալէ՛... կեավուրի աղջիկ...

ԱՂՋԻԿԸ (ողբաձայն)

Մա՛յրիկ... մայրիկ...

ՄԱՅՐԸ (ճգնելով տեղէն ելնել, բայց չկրնալով)

Աղջի՛կս... աղջիկ՛ս...

(Կայծակ, որոտում և անձրև կը շարունակուին)

(Սարին վրայ կ'երևի Ասլանը և մօտը Հիւսէյն)

ԱՍԼԱՆ

Հէ՛յ անաստուած... անաստուած...

(Թուրքը կը քաշկռտէ աղջիկը. աղջիկը կ'ընդդիմանայ երթալ։)

ԱՍԼԱՆ (թուրքին)

Հէ՛յ զալըմ... ձգէ՛ այդ աղջիկը... ձգէ՛, կ'ըսեմ...

(Թուրքը տակաւին կը քաշկռտէ աղջիկը տանելու համար)

ՄԱՅՐԸ (ձեռքերը պարզած)

Աղջի՛կս... աղջի՛կս...

ԱՍԼԱՆ (ատրճանակը ուղղելով)

Ձգէ՛, կըսեմ, կամ չունի պէս կը սատկեցընեմ քեզ...

(Թուրքը տակաւին չի թողուր։ Ասլան ատրճանակը կը կրակէ, որի վրայ թուրքը աղջիկը ձգած կը փախի։)

ԱՂՋԻԿԸ (վազելով դէպի մայրը և գրկելով զայն կը հեկեկայ)

Մայրի՛կ... մայրի՛կ...

(Ասլան և Հիւսէյն վար կ'իջնեն և կը մօտենան մօրը և աղջիկին քով։ Աղջիկը անոնք

տեսնելով՝ ճիչով մը աւելի պինդ կը գրկէ մայրը։)

ՄԱՅՐԸ

Չէ՛... չէ՛... չե՛մ թողուր... չե՛մ թողուր աղջիկս... զիս ալ տարէք...

ԱՍԼԱՆ (վեստահար)

Մի՛ վախնար, մայրիկ, աղջիկդ չենք տանիր...

ՄԱՅՐԸ

Չէ՛... չէ՛... չեմ թողուր... (կը գրկէ աղջիկը)

ԱՍԼԱՆ

Մի՛ վախնար, մայրիկ, քեզ ալ կը տանիմ... (կ'ուզէ ձեռք տալ վերցնելու համար)

ՄԱՅՐԸ (սարսափով և պինդ գրկելով աղջիկը)

Չէ՛... չէ՛... աղջիկս... մի՛ տանիք աղջիկս...

(Վայրկեան մը լուռ)

ԱՍԼԱՆ (ինքնիրեն և տխուր)

Հէ՛յ անաստուածներ... (գուրգուրանքով)

Մայրի՛կ, կուգա՞ս ինծի հետ... մի՛ վախնար, ես դէշ մարդ չեմ... քեզ ալ կը տանիմ, աղջիկդ ալ, որ այլեւս անաստուածներու ձեռքը չիյնաս... մի՛ վախնար, կը տանիմ ու կը պահեմ ձեզ, մինչև որ այս սեւ օրերը անցնին...

(Աղջիկը և մայրը վեստագին ու զարմացած կը նային Ասլանի երեսը)

Իմ տունս շատ հեռու չէ։ Եկո՛ւր, մայրիկ, այս անձրեւին տակ դուք կը մեռնիք...

ՄԱՅՐԸ (լալագին)

Ա՛խ, մահն ալ երեսէ ձգեր է մեզ...

ԱՍԼԱՆ (Հիւսէյնին)

Հիւսէյն, օգնէ ինծի... (ձեռք կուտայ կանգնեցնելու համար մայրը)

ՄԱՅՐԸ (Հիւսէյն անունին վրայ ճչալով)

Հիւսէ՛յն... չէ՛... չէ՛... (լալով բարձրաձայն) Հիւսէյնները լաւ մարդ չեն... Հիւսէյն մը տարաւ տղաս... Հիւսէ՛յն... չէ՛... չէ՛... աղջիկս... (կը գրկէ աղջիկը)

ՀԻԻՍԷՅՆ (մեղմ ձայնով և հակած)

Ես այն Հիւսէյնը չեմ, քուրո՛ւկ... մի՛ վախնար, քու տղադ ալ կը գտնենք....

ՄԱՅՐԸ

Ա՛խ, իմ տղա՞ս ալ... քսան տարի է չէ գտնուեր... դո՛ւք պիտի գտնէք...

ՀԻԻՍԷՅՆ (ձեռք տալով)

Կը գտնենք, քուրո՛ւկ, կը գտնենք...

ՄԱՅՐԸ (Հիւսէյնի նայելով և սարսափած)

Ա՛... չէ՛... չէ՛... (կուլայ) դուն տարիր ու սպանեցիր... չէ՛... չէ՛... չեմ թողուր

աղջիկս... չե՛մ թողուր...

(Մայր ու աղջիկ գրկուած կուլան։ Կայծակ և որոտում)

ԱՍԼԱՆ (ընկնուած ու տխուր)

Հէ՛յ, Անասուածներ...

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Տեսարանն է Օսման բեկի տունը. առաջին արարի սենեակը, միայն թէ սեղան մը կայ բեմին խորը, կեդրոնէն քիչ մը դէպի ետ։ Սեղանին վրայ ոգելից ըմպելիներու տիւեր և գաւաթներ։ Բեմը լուսազարդուած է։ Ժամանակը կէս գիշերէն յետոյ. արշալոյսի մօտ։ Վարագոյրը բացուելուն Օսման գլուխը բաց, կէս գինով վիճակի մէջ, կանգնած է սեղանին քով, գաւաթ մը գինի կը լեցնէ։ Ճէմիլէ բեմին մէկ անկիւնը, մազերը արձակած, քրտնած ու կարմրած, յայտնի է որ երկար ատեն պարեր է և հոգեկան խռովքը տանջեր է զինքը։ Ճէմիլէ կատաղի հայեացքով մը կը նայի Օսմանի եւ կարծես ծրագիր մը կը չափչփէ։

ՕՍՄԱՆ (գինիին գաւաթին նայելով և անյագօրէն խմելով)

Գարէ՛, դէ՛հ, պարէ... Մահիդ պարը պարէ... դուն գիշեր մը ունիս կեանքի, ես գիշեր մը ունիմ... ա՛խ... երանի՛ թէ այս գիշերը

բնաւ չլուսնար.... (գաւաթ մըն ալ կը խմէ և խռովայոյզ) *Ի՞նչ որ գրուած է չաւրւիր...* (ինքզինքը գտնելով) *բայց... պարէ՛... պարէ՛... գիշերը շուտով կը վերջանայ... վերջացուր մահիդ պարը... թող մարմինդ քրտնի ու ծիծերէդ քրտինքդ պուտ-պուտ կաթկթի... Ես դանակս չեմ իւղոտեր, քրտինքդ անոր իւղ, որ երկու ծիծերուդ մէջտեղէն ան մինչև սիրտդ հասնի... պարէ՛, դէ՛հ, պարէ... քու պարէդ ես չեմ կշտանար...*

(Ճէմիլէ Օսմանի հոգեկան տրամադրութիւնները օգտագործելու համար դափը կը շխրտացնէ և կըսկսի պարը մարմնական ծեփ-ծեփումներով։

ՕՍՄԱՆ (գաւաթ մը եւս կը խմէ և երերալով կուգայ, կը նստի դիւանին վրայ և զգըլխած կը դիտէ Ճէմիլէն, որ կը պարէ։ Դէմքի արտայայտութենէն կ'երեւի որ հոգեկան մեծ խռովքի մէջ է։ Ինքզինքը գտնել ճգնելով։)

Դարձի՛ր, դարձիր, ու գլուխս դարձուր... Ա՜խ բա՛ր... մի՛ թողուր որ թուլնամ ես...

ՃԷՄԻԼԷ (վայրկեանը հասած համարելով՝ պարելով գաւաթ մը գինի կը բերէ)

Բե՛կ...

ՕՍՄԱՆ

Ա՛խ, այդ ձայնը, որ այլեւս չպիտի լսեմ յաւիտեան... Տո՛ւր, տուր որ խմեմ այդ ձեռ-

քէն, որ ինծի թոյն խմցուց... (կը գրկէ տըռփալից) *խմցո՛ւր... ՃԷՄԻԼԷ՛... դուն քու ձեռքովդ խմցուր...* (ընկնուած) *Ես ամենէն երջանիկն էի մարդերուն, ինչո՞ւ դիս ամենէն դըժբաղդը ըրիր... Քեզ հոգիս մէջ կը պահէի, ինչո՞ւ հոգիս թունաւորեցիր... ՃԷՄԻԼԷ՛... չեմ գիտեր ե՞ս եմ զոհը թէ դուն... դանակը ձեռքիս մէջ կը դողայ...*

ՃԷՄԻԼԷ

Բե՛կ... (գինին կը խմցնէ)

ՕՍՄԱՆ

Խնդրէ՛... ՃԷՄԻԼԷ՛... (Օսման կը գրկէ աւելի սեղմ։ ՃԷՄԻԼԷ անոր տկար վայրկեանը օգտագործելու համար կը թողու, միւս ձեռքով Օսմանի մէջքէն խանչալը կը քաշէ առանց զգացնելու։)

(Դուռին վրայ կ'երեւի Այիշէի գլուխը։ Հասան կ'երեւի դուռին վրայ։)

ՀԱՍԱՆ

Բե՛կ, Ասլանը եկաւ... երկու հայ կնիկ բերեր է հետը...

ՕՍՄԱՆ

Դո՛ւն ալ սիրտը բեր ինծի... սիրտը բեր..

(Հասան և Այիշէ կը կորսուին)

ՃԷՄԻԼԷ

Բե՛կ... Ասլանի կեանքին խնայէ... եւ իմ սիրտս հէլալ ըլլայ քեզ...

ՕՍՄԱՆ

Սիրուողին սիրտը սիրողին պիտի տամ.... Ասլանին սիրտը քեզի, ՃԷՄԻԼԷ՛... քու սիրտդ ալ ինծի... (կ'ուզէ սեղմել կուրծքին վրայ եւ համբուրել)

ՃԷՄԻԼԷ (գազանացած՝ ոտքի կանգնելով)

Իսկ քո՞ւ սիրտդ...

(Օսման ձեռքը կը նետէ խանչալին և չգըտներ. ՃԷՄԻԼԷ առանց ժամանակ տալու դաշոյնը կը խրէ Օսմանի կուրծքը, յետոյ արիւնոտ դաշոյնը ձեռքը վայրկեան մը կատաղի ակնարկ մը կը ձգէ Օսմանի վրայ, որ կը ճգնի կանգնիլ ու կը ստկւի ատրճանակը քաշելով... ՃԷՄԻԼԷ խելագարի պէս դէպի դուրս կը վազէ... Օսման կը կրակէ ատրճանակը անոր ետեւէն ու կ'իյնայ)

(ՎԱՐԱԳՈՅՐ)

ԱՐԱՐԻԱԾ Գ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Տեսարանն է Օսման բեկի տունին բակը։ Գործողութիւնը տեղի կ'ունենայ այն ժամին, երբ Օսման և Ճէմիլէ միասին են։ Տախտակի մը վրայ երկնցուցած են մայրը։ Ասլան մէկ կողմէն վէրքերը կը կապէ եւ միւս կողմէ կ'աշխատի հանդարտեցնել զայն։ Աղջիկը արտասուալից գրկած է մօրը գլուխը։ Հիւսէյն կանգնած է տխուր մօրը դիմացը։ Տեսարանին խորը փողոց տանող դուռն է փակ վինակի մէջ. իսկ աջ կողմը կայ մուտք մը դէպի տուն առաջնորդող։

ԱՍԼԱՆ

Օգնէ ինձ, Հիւսէ՛յն...

(Հիւսէյն կը մօտենայ)

ՄԱՅՐԸ (ճչալով և գրեթէ անգիտակից իր խօսածներուն)

Չէ՛... չէ՛... չեմ թողուր աղջիկս... ան

տարաւ զաւակս... (աղաչելով Ասլանին) *մի՛ թողուր... մի՛ թողուր... մի՛ թողուր որ աղջիկս տանի...* (կը գրկէ աղջիկը։ Հիւսէյնի դէմքը նայելով) *Ես կը յիշեմ իր դէմքը...*

ԱՍԼԱՆ (հանդարտեցնել աշխատելով)

Չէ՛, մայրիկ, մի՛ վախնար, Հիւսէյնը դէշ մարդ չէ... ան շատ բարի է... ինծի չափ բարի... ան աղջիկդ չի տանիր... ես չեմ թողուր...

ՄԱՅՐԸ (Հիւսէյնին)

Ո՛ւր տարիր զաւակս... ա՛, մեռցուցիր... հեռո՛ւ... հեռո՛ւ... (դէմքը կը ծածկէ եւ կուլայ) *Չէ՛... չէ՛... ան տարաւ զաւակս... Հայկակս...* (կը հեկեկայ)

ԱՍԼԱՆ (աղջիկին)

Ո՞վ է Հայկակը...

ԱՂՋԻԿԸ (արտասուալից)

Իմ եղբայրս է եղեր, բե՛կ... քսան տարի առաջ կոտորածին քիւրտ մը հայրս է սպաներ, քիւրտ մըն ալ իմ չորս տարեկան եղբայրս է տարեր...

ՄԱՅՐԸ

Հայկակս...

ՏԵՍԱՐԱՆ Բ.

1895-ի ջարդի օրերը։ Տեսարանն է սարի մը կուշտը. որի փէշերը տարածուող գիւղը կը մխայ։ Սարին կուշտը դիակներ փռուած են ասդին անդին. հրացանի ձայներ կը լսւին դուրսէն. ողբի ձայներ և հոգեվառոի հոնդիւններ դուրսէն։ Տղամարդ մը նստած է վիրաւոր. կին մը ձախ թեւով մէկ տարեկան երեխայ մը գըրկած. իսկ չորս տարեկան մանչ մըն ալ կախուած է մօրը փէշէն լալով—ճչալով։ Երկու ֆիւրտեր, մէկը սուրը բարձրացուցած կանգնած է տղամարդին դիմաց։)

ՏՂԱՄԱՐԴ (աղաչելով)

Խնայէ՛ կեանքիս... ունեցած-չունեցածս առիր, կեանքս չնորհէ այս որբուկներուն.... (կինը կը վազէ ֆիւրտին վրայ, կը բռնէ թեւը, որ սուրը բարձրացուցեր էր. ու ետ կը քաշէ զայն և կ'անցնի ֆիւրտին ու ամուսինին մէջտեղ։)

ԿԻՆԸ

Խնայէ՛... խնայէ՛... Աստծոյ սիրոյն... Մուհամմէտի սիրոյն... Ջահիլ արեւիդ սիրոյն... զթա երկու որբուկներուս...

ՖԻՒՐՏԸ (վիրաւորուած ու կատղած կնիկի յարձակումէն, հրացանին կոթով կը հարուածէ կինը, որ սակայն կը յամառի մնալ երկուքին

մէջտեղ, աջ ձեռքը տարածելով պաշտպանողի մը պէս) *Վա՛յ, անհաւատ շուն.. կեավուրի կին մը եւ...* (սուրը բարձրացուցած առաջ անցնիլ կ'ուզէ. կինը կը բռնէ թեւը։ Վերջապէս ֆիւրտը նարահատ կը քաշուի մէկ կողմ եւ ատրճանակը կը կրակէ։ Տղամարդը զարնուած կ'երկննայ)

ԿԻՆԸ

Ա՛խ, անաստուածներ... անաստուածներ... (ողբ ու ճիչով՝ կը վազէ դէպի ամուսինը, երեխան կը ձգէ գրկէն. կ'իյնայ ամուսինին դիակին վրայ և բարձրաձայն կուլայ։ Զորս տարեկան երեխան ալ մօրը քով կ'իյնայ հօրը դիակին վրայ և կուլայ։)

(Սպանող ֆիւրտը գոհունակ իր գործէն և բեռէ մը թեթևցած.— *Հիւսէ՛յն, վերցո՛ւր այդ մանչուկը։* (Կ'անհետի։ Երկրորդ ֆիւրտը կը վերցնէ չորս տարեկան երեխան եւ կը գրկէ ու կըսկսի քալել։)

ԵՐԵԽԱՆ (ճչալով ու լալով)

Մայրի՛կ... մայրի՛կ...

ԿԻՆԸ (թողելով ամուսինին դիակը և ձեռքերը տարածած դէպի ֆիւրտը, որ կ'անհետը)

Տէ՛ր... տէ՛ր... ո՛ւր կը տանիք զաւակս... անաստուածներ... էրիկս սպանեցի՛ք... ո՛ւր կը տանիք Հայկակս... (ճչալով) *Հայկա՛կս...* (կ'իյնայ գետին)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Պատկերը առաջին տեսարանն է։ Բակը։ Վարագոյրը բացուելուն բոլորը կուլան։

Հիւսէյն սարսափած վիճակի մէջ է

ՄԱՅՐԸ

Հայկա՛կս... անասունները...

ՀԻՒՍԷՅՆ (սարսափած)

Ասլա՛ն... Ասլա՛ն...

ԿԻՆԸ (բանդագուշանքի մէջ)

Զէ՛... աղջիկս... ո՛ւր կը տանի՛ք աղջիկս...

ԱՂՋԻԿԸ (արտասուագին)

Մայրի՛կ... մայրի՛կ... ես այստեղ եմ, քու քովդ...

ՀԻՒՍԷՅՆ (միշտ սարսափի մէջ)

Ասլա՛ն... Ասլա՛ն... մայրդ է...

ԱՍԼԱՆ (Ցատկելով, վայրկեան մը ուշակորոյս, յետոյ բռնելով ու ցնցելով Հիւսէյնը)

Ի՞նչ կը խօսիս, Հիւսէ՛յն... ի՛նչ կը խօսիս...

ՀԻՒՍԷՅՆ (միշտ նոյն վիճակով)

Մայրդ է, մայրդ... իրաւ է... ես եմ այն Հիւսէյնը, որ քեզ դրկեցի ու բերի...

ԱՍԼԱՆ (վայրկեան մը չհասկնալով կարծես եղածը. յետոյ յանկարծ պոռթկալով)

Եւ ո՛վ է հայրս սպանողը...

ՀԻՒՍԷՅՆ

Հա՛յրդ... Օսման բէ՛կը...

ԱՍԼԱՆ (խելագարի պէս)

Օսման բէ՛կը... ա՛... քսա՛ն տարի... եւ ես հօրս, հարազատ հօրս արիւնն եմ կեր բեր... ա՛... հա՛յրս... Օսման բեկը...։

ԱՂՋԻԿԸ (լալով ու մայրը գրկելով, որ հոգեվարքի մէջ է)

Մայրի՛կ... մայրի՛կ... աչքերդ բաց... ա՛... կը մեռնի...

ԱՍԼԱՆ (աղջիկին ձայնին վրայ կարծես սթափած կը վազէ դէպի մայրը և գրկելով)

Մայրի՛կ... մայրիկ... աչքերդ բա՛ց... ես զաւակդ եմ... ես Հայկակդ եմ...

ՄԱՅՐԸ (աչքերը կը բանայ կը նայի Ասլանի երեսը և մարող ձայնով)

Հա՛յ...կա՛կ... (կը մեռնի Ասլանի թեւերուն մէջ)

(Ասլան կը համբուրէ մօրը դէմքը... աղջիկը ինկած՝ կուլայ դիակին վրայ)

(Վայրկեան մը ողբ ու հեկեկանք)

ԱՍԼԱՆ (ընկնուած՝ բայց ինքզինքը գտնել ճգնելով՝ կը դնէ մօրը դիակը տախտակին վրայ։ Կը բռնէ էրոջը ուսէն և վերցնելով զայն դիակին վրայէն, վայրկեան մը լուռ ու երազուն կը նայի անոր դէմքը)

Քո՛յր իմ...

(Այս միջոցին ՃԷՄԻԼԷ հերարձակ, վիրաւորուած, բայց արիւնոտ դաշոյնը ձեռքը աջ մուտքին վրայ կը կանգնի։)

ՃԷՄԻԼԷ

Ա՛սլան... Ա՛սլան...

ԱՍԼԱՆ (կը թողու քոյրը և մեքենական շարժումով ցատկելով՝ դէպի ՃԷՄԻԼԷՆ կը մօտենայ) *Ճէմիլէ՛...*

ՃԷՄԻԼԷՆ (ուժասպառ քայլ մը կ'առնէ դէպի Ասլանը)

Ա՛սլան... (կ'իյնայ Ասլանի գիրկը) *սպանեցի՛... կը մեռնի՛մ... քեզ սիրեցի... հայրդ սպանեցի...*

ԱՍԼԱՆ

Հա՛յրս... (կը բռնէ ՃԷՄԻԼԻ աջ ձեռքը, որ դաշոյնը ափին մէջ կախուած է ու կը համբուրէ ձեռքը։)

ՃԷՄԻԼԷ

Ասլա՛ն... ես մահիս պարը պարեցի... դուն մահիս համբոյրը համբուրէ... (աչքերը սեւեռուն Ասլանի երեսին, կըսպասէ որ համբուրէ)

(Վայրկեան մը լուռ)

(ՃԷՄԻԼԷ Ասլանի գիրկը, մազերը կախ Ասլանի թեւերէն վար. ՃԷՄԻԼԷԻ աչքերը կը մարմըրին։ Ասլան տենդագին կը համբուրէ ՃԷՄԻԼԷՆ, որ կը մեռնի)

(Վ Ե Ր Ջ)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍ.-ՍՍՀ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1— Շանթեր (*սպառած*)	15 ս.
2— Ամպեր (*սպառած*)	25 ս.
3— Օրէնքի եւ Ընկերութեան Զոհերէն	25 ս.
4— Քաւութեան Երգեր	10 ս.
5— Մարդը (*Թատերգ.— սպառած*)	25 ս.
6— Աշխարհի Յեղափոխութիւնները (*Թարգմ.*)	35 ս.
7— Սէրի եւ Ատելութեան Երգեր	$1·00
8— Կարգաւոր Հայրեր (*սպառած*)	25 ս.
9— Վրէժի Աւետարան, Ա. գիրք (*սպառ.*)	25 ս.
10—Ասլան բեկ (*Թատերգ.*)	35 ս.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

Վրէժի Աւետարան, Բ. գիրք

«Ազգային գրադարան»
NL0355605

45599

ԳԻՆ՝ 35 ԱԷՆՏ